ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 19-Ա

„31" հոկտեմբեր 2023թ.

ք.Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 95-րդ և 96-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի N 3245-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրը՝

Որոշում եմ՝

1. 2023 թվականի 1-ին եռամսյակում մարզի Արարատ համայնքում իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն:

2. Հաստատել իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի N 3245-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրով:

4. Աշխատանքային խմբի ղեկավարին՝

1) Ապահովել համայնքի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին հսկողությունը սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ գրությամբ պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով, կամ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով) տեղեկացումը, որը պարունակում է տեղեկություններ հսկողության իրավական հիմքի, հսկողություն իրականացնող համապատասխան աշխատանքային խմբի, պաշտոնատար անձանց կազմի, բնագավառների, նպատակի, ժամկետների մասին:

2) Յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողությունն ավարտելուց հետո սահմանված ժամկետում հսկողության արձանագրությունը և արդյունքները ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

3) Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման արդյունքում կազմված արձանագրությունը, խախտումները վերացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարին ներկայացված առաջարկությունները, ինչպես նաև հսկողության վերաբերյալ համայնքի ղեկավարի ներկայացրած առարկությունները սահմանված ժամկետում հրապարակել մարզպետարանի ինտերնետային պաշտոնական կայքում:

31.01.2023

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ

Հավելված

ՀՀ Արարատի մարզպետի 2023թ.

հունվարի 31-ի

79-Ա որոշման

2023 թվականի 1-ին եռամսյակում Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	*Համայնքի անվանումը*	*Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակահատվածը*	*Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը*	*Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք*	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	*Անուն, ազգանուն*
1	Արարատ	Փետրվարի 13 - մարտի 17	ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ	ՏԻ ԵՎ ՀԳՄ հարցերով վարչության պետ *(աշխատանքային խմբի ղեկավար)*	Հովհաննես Ուրֆալյան
			ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ	Իրավաբանական բաժնի պետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Հրաչ Դավթյան
			ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ	Իրավաբանական բաժնի ավագ մասնագետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Արմենուհի Ազատյան
			Հողօգտագործման բնագավառ	Հողաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Ոսկան Միսակյան
			Քաղաքաշինության բնագավառ	Քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Վահե Բաղդասարյան
			Ֆինանսական բնագավառ	Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ	Նաիրա Հայրապետյան
			Ֆինանսական բնագավառ	Ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Ռաֆիկ Թարվերդյան
			Ֆինանսական բնագավառ	Ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Մովսես Մանուկյան

			Առևտրի և ծառայությունների բնագավառ	Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Վարդան Սաֆարյան
			Պաշտպանության բնագավառ	Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ (*աշխատանքային խմբի անդամ)*	Մուրադ Միքայելյան
			Կրթության, մշակույթի և սպորտի բնագավառ	Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ (աշխատանքային խմբի անդամ	Մարտուն Մանուկյան
			Կրթության, մշակույթի և սպորտի բնագավառ	Կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ (աշխատանքային խմբի անդամ)	Անահիտ Խուդավերդյան
			Գյուղատնտեսության բնագավառ	Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ*(աշխատանքային խմբի անդամ)*	Աշոտ Սարգսյան

Восстановимая подпись

X

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Подписано: MKRTCHYAN ARTUR 3414870525 Ա. ՄԿՐՏՉՅԱՆ